Արձանագրություն N 2

«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/9» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Խոսափողների, բարձրախոսների հավաքածուի,համակարգչի և անխափան սնուցման աղբյուրների» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր

22 ապրիլ 2024թ.-
25 ապրիլ 2024թ.

Հանձնաժողովի նախագահ՝
համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ոսկան Եղիազարյան
Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձոր քաղաքի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արփինե Մուրադյան,

համակարգչային ծրագրերի և տեխնիկայի սպասարկող Գոռ Հակոբյան,

համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման բաժնի պետ Նարինե Խաչատրյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է չորս անդամից,իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները,հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԱԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարագը.

1.Հանձնաժողովի նիստի օրակարագը հաստատելու մասին:
2.Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման գնի մասին:
3.Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4.Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների,ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5.Ընթացակարգի ընտրված մասնակցին հայտարարելու մասին:
6. Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին:
7. Համակարգի միջոցով գեներացված հայտարարությունների և անգործության ժամանակահատված կիրառելու մասին:
8.Կատարված հարցումների,պարզաբանումների,հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների,հակաօրինական գործողությունների,ներկայացված բողոքների մասին:
9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման գները՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չափաբաժնի ընդհանուր գնման գինը
1	*խոսափողների – բարձրախոսների հավաքածուներ*	*990000*
2	*համակարգիչներ*	*250000*
3	*անխափան սնուցման աղբյուրներ*	*360000*

«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:
Կողմ՝ 4,դեմ՝ 0:
Հանձնաժողովը որոշեց.
1.Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
Կողմ՝ 4,դեմ՝ 0:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/9» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցներ/.

h/h	Մասնակցի անվանումը	Հասցե,հեռ.	Էլ.փոստ	ՀՎՀՀ
1.	«ՍԵԳ» ՍՊԸ	Ք.Երևան,Կուրղինյան նրբ.6շ.բն.32 055019060	seg_tender@mail.ru	00878823
2.	«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ	Ք.Երևան,Մոլդովական 50/4 077666566	footmafor@gmail.com	01068008
3.	«ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ	Ք. Երևան, Դավթաշեն 3 թղմ,շ.30,26 +37433906030	artak1978@hotmail.com	08230405
4.	«ԱՅՓԻՍԵՔ» ՍՊԸ	Շահումյան 16փ 20/1 +37433331180	ipsec77@mail.ru	01338107

2024թ. ապրիլի 23-ին ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից **«ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ-ի** հայտը գնահատելիս Հանձնաժողովն արձանագրեց, որ առկա են անհամապատասխանություններ հրավերի և օրենսդրության պահանջների նկատմամբ,մասնավորապես՝

- ✓ Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ **«ԼԱՎԱՆՆԱ» ՍՊ Ընկերության** 80% բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Արտակ Հրանտի Աբրահամյանը,20% բաժնեմասի սեփականատեր՝ Աննա Սուրենի Լալայանը:
- ✓ Համայնքապետարանի աշխատակազմին հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ **«ԱՅ-Թի Թրեյդինգ» ՍՊ ընկերությունը** (ՀՎՀՀ՝ 02648694)՝ որի 100% բաժնեմասի սեփականատերը հանդիսանում է Արտակ Հրանտի Աբրահամյանը, 2023 թվականի հուլիսի 25-ից մինչև 2025 թվականի հուլիսի 25-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ):
- ✓ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում**...»:
- ✓ Ընդ որում՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի (այսուհետ՝ Կարգ) 121-րդ կետի համաձայն՝ **մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:**
- ✓ Համաձայն ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն, (...):

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական կարգավորումները՝ Հանձնաժողովը որոշեց՝ «ԼԱՎԱՆՆԱ» ՍՊ Ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել: Մասնակցի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Կարգի 58-րդ կետի համաձայն՝ **եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ:**

Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով **«ՍԵԳ» ՍՊԸ-ի հայտը համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով մերժվել է՝ գնման գնի գերազանցման հիմքով:**

Ընթացակարգի **3-րդ չափաբաժնի մասով** առաջին տեղ զբաղեցրած մասնակից **«ՍԵԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին: **Ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:**

«ՍԵԳ» ՍՊԸ-ի հայտը էլեկտրոնային համակարգում հանձնաժողովի կողմից գնահատվել է՝ **բավարար:**

***Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:**

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ,ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2024թ. ապրիլի 25-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները:

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում:

Չափաբաժին	*Մասնակցի անվանումը*	*Նախնական առաջարկ Արժեք*	*ԱԱՀ*	*Առաջարկված գինը*	*Վերջին առաջարկ Արժեք*	*ԱԱՀ*	*Առաջարկված գինը*	*Մասնակցի կարգավիճակ /ընտրված մասնակցի դեպքում X/*
1.խոսափողների – բարձրախոսների հավաքածուներ	«ՍԵԳ» ՍՊԸ	2280000	0 %	2280000	2280000	0 %	2280000.00	***Մերժված***
	«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ	24400000	20 %	29280000	24400000	20 %	29280000.00	մերժված
2.համակարգիչներ	«ԼԱՎԱՆՆԱ» ՍՊԸ	205000	20 %	246000	182000	20 %	218400.00	***մերժված***
	«ԱՅՓԻՍԵՔ» ՍՊԸ	250000	20 %	300000	184950	20 %	221940.00	

	«ՍԵԳ» ՍՊԸ	348000	0 %	348000	348000	0 %	348000.00	Մերժված
	«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ	24400000	20 %	29280000	24400000	20 %	29280000.00	Մերժված
3.անխափան սնուցման աղբյուրներ	«ՍԵԳ» ՍՊԸ	357600	0 %	357600	357600	0 %	357600.00	X
	«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ	24400000	20 %	29280000	24400000	20 %	29280000.00	Մերժված

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024թ. ապրիլի 25-ին կայացած նիստում Հանձնաժողովը որոշեց՝ «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/9» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի արդյունքում ընտրված մասնակից հայտարարել՝ **«ՍԵԳ» ՍՊԸ-ին**՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

5. «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերը՝ « **ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/9»** ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած /հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին և պայմանագիր չի կնքվում/:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

6. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա.Ավետիսյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն /ներ/ի տեքստ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ,ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ,ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել, պարզաբանումներ չեն տրամադրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագրի նախագիծը:
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակցին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4,դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝
Ոսկան Եղիազարյան----------
Հանձնաժողովի անդամներ՝
Նարինե Խաչատրյան----------
Արփինե Մուրադյան----------
Գոռ Հակոբյան----------
Հանձնաժողովի քարտուղար՝
Ա.Ավետիսյան ----------